ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅՑՈՐԴԻ ՌՈԶԱ ՅՈՒՐԻԻ ԱՎԱԳՅԱՆԻ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 - «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1991 թվականին Արցախի Հանրապետությունն անցում կատարեց շուկայական հարաբերություններին, ձեռնարկեց տնտեսական բարեփոխումներ, ստեղծեց ինստիտուցիոնալ կառավարման համակարգ, իրականացրեց պետական սեփականության ապակենտրոնացում և մասնավորեցում: Պատերազմների հետևանքով զգալիորեն կրճատվեց գործող ձեռնարկությունների թիվը, ինչն էլ մեծացրեց գործազուրկների քանակը, չստեղծվեց արդյունավետ շուկա, չձևավորվեց մասնավոր ձեռնարկատերերի խավ:

Արցախի Հանրապետությունում (ԱՀ) ներդրումների ծավալները հեռու են բավարար լինելուց, դրանք խիստ ցածր են տնտեսության կայուն աճ ապահովելու գործում: Այս ամենն իրենց ազդեցությանն են թողնում երկրի սոցիալական վիճակի և հատկապես բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: ԱՀ-ում սոցիալական ոլորտի բարեփոխումները հստակ մշակված սոցիալական քաղաքականության գերակայությունների և նպատակների դասակարգմամբ չեն առաջնորդվել, ունեցել են առավելապես մարտավարական, քան ռազմավարական բնույթ: Սոցիալական քաղաքականությունը գտնվում է կայացման փուլում, իսկ առկա բացթողումները պայմանավորված են տնտեսական իրական հնարավորությունների վրա հիմնված սոցիալական քաղաքականության միասնական հայեցակարգի բացակայությամբ, սոցիալական ապահովության համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմքերի անբավարարությամբ, սոցիալական գործընթացների հետազոտության համակարգի բացակայությամբ,

ինչի ներդրումը կհստակեցնի իրականացվող բարեփոխումների սոցիալական հետևանքների կանխատեսումների ճշգրտությունը:

Նշված խնդիրների հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորել է ատենախոսության թեմայի ընտրությունը, վեր հանված հարցերի ուսումնասիրության շրջանակներն ու խորությունը, ատենախոսության կառուցվածքը, որն էլ հիմք է ծառայել թեմայի խիստ արդիականության և հրատապության իրականացման համար:

ՀԵՏՈԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հետազոտության նպատակն է բացահայտել ԱՀ բնակչության բարեկեցեության բարձրացման հիմնախնդիրները և առաջարկել դրանց հաղթահարման ուղիները: Ելնելով նշված նպատակից ատենախոսությունում առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տնտեսական աճի հաշվարկման ժամանակակից մոտեցումներն ու մոդելները, դրանց կիրառման առանձնահատկությունները,
- վեր հանել բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա ազդող գործոնները, դրանց կառավարման արդի կազմակերպատնտեսական մոտեցումները,
- վերլուծել բնակչության աղքատության հաղթահարման և կենսամակարդակի բարձրացման միջազգային փորձը, դրա հիման վրա մշակել Արցախում կիրառելի մոտեցումները, ԱՀ Հանրապետության սոցիալ-տնտեսական ցուցանիշների դինամիկան, բացահայտել այն հիմնական գործոնները, որոնք կարող են բերել բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը,
- ներկայացնել աղքատության հաղթահարման պետական աջակցության ծրագրերը և ԱՀ կիրառվող սոցիալական քաղաքականության առանձնահատկությունները,
- բացահայտել ԱՀ տնտեսական աճի ապահովման ու տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները, որոնք կնպաստեն աղքատության աստիճանի կրճատմանը և բարձրացնել բնակչության բարեկեցության աստիճանը,
- բացահայտել սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը հանրապետությունում կոմունալ-կենցաղային աղքատության հաղթահարման գործում,
- վեր հանել աղքատության հաղթահարման պետական աջակցության կառուցակարգերը և սոցիալական քաղաքականության կատարելագործման ուղիները,

որոնք կբերեն տնտեսության զարգացմանը և բնակչության բարեկեցության բարձրացմանը,

- իրականացվող ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության հիման վրա, մատնանշված հիմնախնդիրների լուծման նպատակով, ներկայացնել բնակչության բարեկեցության բարձրացման և աղքատության հաղթահարման առաջարկություններ ԱՀ-ում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի առաջաբանում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսական, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթն ու արդյունքները, դրանց գործնական նշանակությունը, փորձարկումն ու հրապարակումները, հետազոտության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Բարեկեցության տեսամեթոդական հիմքերը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից՝ առաջին ենթագլխում վերլուծվել են տնտեսական աճի վերաբերյալ առկա տեսակետները: Ուսումնասիրվել և գնահատվել են տտնտեսական աճի հաշվարկման ժամանակակից մոտեցումները և մոդելները (մեթոդները):

Նույն գլխի 2-րդ ենթագլուխը վերնագրված է **«Բնակչության կենսամակարդակի վրա ազդող գործոնները, դրանց կառավարման կազմակերպատնտեսական և գնահատման ժամանակակից մոտեցումներ»**: Այս ենթագլխում բնութագրվում է բնակչության կենսամակարդակի վրա ազդող գործոնները: Տրվում է վերոգրյալ եզրույթի տարբերությունը «կյանքի վորակի» եզրույթի հետ:

Նույն գլխի 2-րդ ենթագլուխը վերնագրված է **«Բնակչության աղքատության հաղթահարման և կենսամակարդակի բարձրացման միջազգային փորձը»**: Այս ենթագլխում ամփոփվում է բնակչության աղքատության հաղթահարման և կենսամակարդակի բարձրացման միջազգային փորձը՝ մասնավորապես Սինգապուրի և Իսրայելի: Դիտարկվել են հիմնախնդրի հետ առնչվող տեսություններ և մոդելներ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Տնտեսական աճի և բարեկեցության մակարդակի վերլուծությունն ու գնահատականը Արցախի Հանրապետությունում»** գլխի առաջին ենթագլխում՝ **«Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական ցուցանիշների վերլուծությունը»** քննարկվում են Արցախի Հանրապետության սոցիալտնտեսական ցուցանիշ-

ները, երկրորդ ենթագլխում՝ **«Բարեկեցության մակարդակի վրա ազդող հիմնական գործոնները, դրանց վերլուծությունը և բարձրացման հիմնախնդիրները»** ներկայացվում են բարեկեցության մակարդակի վրա ազդող հիմնական գործոնները, դրանց վերլուծությունը և բաձրացման հիմնախնդիրները, որից հետո երրորդ ենթագլխում՝ **«Սոցիալական քաղաքականությունը Արցախի Հանրապետությունում»** անդրադարձ է կատարվում նաև աղքատության հաղթահարման պետական աջակցոջության ծրագրերին և սոցիալական քաղաքականությանը:

Ատենախոսության երրորդ՝ **«Բնակչության բարեկեցության բարձրացման և աղքատության հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում»** գլխում առաջին ենթագլխում՝ **«Տնտեսական կայուն աճի ապահովման և տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները Արցախի Հանրապետությունում»** բնութագրվում են տնտեսության կայուն աճի ապահովման և տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները, երկրորդ ենթագլխում՝ **«Սոցիալական տրանսֆերտները և դրանց դերը կենցաղային աղքատության հաղթահարման գործում»** սոցիալական տրանսֆերտները և դրանց դերը կենցաղային աղքատության հաղթահարման գործում, իսկ երրորդ ենթագլխում՝ **«Աղքատության հաղթահարման պետական աջակցության կառուցակարգերը և սոցիալական քաղաքականության կատարելագործման ուղիները Արցախի Հանրապետությունում»** վերլուծվում են աղքատության հաղթահարման պետական աջակցության կառուցակարգերը և սոցիալական քաղաքականության կատարելագործման ուղիները:

Հետազոտության արդյունքներն ամփոփվել են «Եզրակացություններ» բաժնում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հեղինակի ներկայացմամբ՝ ատենախոսությունում իրականացված հետազոտությունների ու վերլուծությունների հիման վրա ստացվել են արդյունքներ, որոնք նրա կողմից համարվել են գիտական նորույթ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական դրույթները, հետազոտությունների արդյունքները և առաջարկությունները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի կառավարման և Ագրարային էկոնոմիկայի ամբիոնների համա-

տեղ նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են ատենախոսի 9 գիտական հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, շարադրված է 154 համակարգչային էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը, պարունակում է 32 աղյուսակ, 2 գծապատկեր, 107 անուն գրականության ցանկ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում բացահայտվել են, սակայն չեն համակարգվել և դասակարգվել:

Հետազոտության նպատակը հստակ չի ձևակերպվել: «Ատենախոսության հետազոտության նպատակն է Արցախի Հանրապետությունում բնակչության բարեկեցության բարձրացման հիմնախնդիրների լուծման ուղիների բացահայտմամբ մատնանշել այն օրակարգային հարցերը, որոնք առաջին հերթին հնարավորություն կտան կրճատել աղքատության մակարդակը, մեղմել դրա սրությունը, նվազեցնել գործազրկության աստիճանը, ապահովել եկամուտների բաշխման արդարությունը և վարել սոցիալական այնպիսի քաղաքականություն, ինչը կբերի իշխանությունների հանդեպ վստահության վերականգնմանը»: Այն չի համապատասխանում ատենախոսության թեմայի անվանմանը՝ **«Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում»**:

Աշխատանքում չեն նեռարվել միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները, որոնք կարելի է վերաբերել Արցախի Հանրապետությունյան առանձնահատկություններին, մասնավորապես՝ Սերբիայի և այլն: Ուսումնասիրությունները ներառված տվյալները սահմանափակվում են 2017թ. և չեն ընդգրկում վերջին իրադարձությունները:

Բացի այդ բացահայտված հիմնախնդիրների **հաղթահարման ուղիների** իրականացումը հեղինակի կողմից չի հիմնավորվել համապատասխան ֆինանսական ռեսուրսների ծավալի և հայտատման անհրաժեշտության հետ:

Ատենախոսը անդրադարձել է Արցախի Հանրապետության սահմանադրությանը, սակայն հաշվի չի առել տասնմեկերորդ հոդվածի բոլոր պահանջները՝ **«Արցախի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը»**: Մասնավորապես, մասնավոր սեփականության մասնակցությունը և դերը բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրների լուծման համար ատենախոսը չի գնահատել: Ատենախոսին չի հաջողվել մանրամասնել **«սոցիալական շուկայական տնտեսությանն»** եզրույթի առանձնահատկությունները և պահանջները բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրների լուծման տրամաբանության կոնտեկստում:

Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը պետության քաղաքականության հիմնական նպատակները, որոնք շարադրված են Արցախի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածում, կարողանար բացահայտել և ներկայացներ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները՝ ինչու դրանք չեն իրականացվել կամ թերի են իրականացվել:

Ատենախոսը ներկայացրել է աղքատության և բարեկեցության կատեգորիաների հակադարձ **«դիալեկտիկական և հայելային արտացոլման կապը»** որպես գիտական նորույթ: *Սակայն պետք է նշել որ այդ կապը հայտնի է:* Ընդ որում, ատենախոսը **բնակչության կենսամակարդակը, ընդհանուր բարեկեցությունը և մինիմալ բարօրության ապահովումը, որը բխում է ընդհանուր բարեկեցությունից** չի բանաձևել և հաշվարկել:

Ներկայացված նույնպես որպես գիտական նորույթ ատենախոսի կողմից բացահայտված զբոսաշրջությանը խոչընդոտող գործոնները ԱՀ-ում, այնուամենայնիվ, ուղղակի չեն կարող ազդել **բնակչության կենսամակարդակի վրա:** Վիճելի և անորոշ է նաև այն հիմնավորումը, որ Արցախի Հանրապետությունում տնտեսական աճի տեմպերը

կապվում են Հայաստանը ԵԱՏՄ երկրների և Իրանի հետ տնտեսական ինտեգրման և տնտեսական հարաբերությունները մակարդակ հետ:

Ատենախոսը առաջարկում է ԱՀ-ում բնակչության բարեկեցության բարձրացման նպատակով վերանայել կիրառվող սոցիալական քաղաքականության որոշ տարրեր՝ մշակել սոցիալական աջակցության, սոցիալական երաշխիքների և սոցիալական ապահովության այնպիսի ծրագրեր, որոնք կերաշխավորեն նաև զոհված ազատամարտիկների ընտանիքների սոցիալական պաշտպանվածությունը, սակայն չի նշում կոնկրետ ծրագրեր, որոնք վերաբերելի են և ԱՀ, և ՀՀ զոհված ազատամարտիկների ընտանիքներին: Դրանք ունեն հստակեցման անհրաժեշտություն:

Օգտագործված գրականության ցանկում առկա են ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, սակայն առկա չեն մի շարք հետազոտություններ, որոնք առնչվում են թեմայի հետ: Բացի այդ, սեղմագրում 7, 8, 9 համարների տակ նշված հեղինակի հոդվածները տպագրվել են 2019թ. Սակայն դրանք առկա չեն ատենախոսությունում՝ դրանց վրա հղումները բացակայում են: Կարող է տպավորություն ստեղծվի, որ հետազոտությունն ամբողջական չէ: Անհրաժեշտ է որպեսզի վերոգրյալ հարցերի շուրջ ատենախոսը հայտնի և հիմնավորի իր մոտեցումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ռոզա Յուրիի Ավագյանի «Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները եվ դրանց հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը տվյալ ժամանակահատվածի համար ավարտուն գիտական աշխատություն է, իսկ վերոգրյալ դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի արժանիքները:

Ատենախոսության սեղմագիրը և հրապարակված հոդվածները բխում են աշխատանքի բովանդակությունից: Ատենախոսության արդյունքային դրույթները կարող են օգտագործվել Արցախի Հանրապետությունում պետական կառավարման մարմինների կողմից սոցիալական-շուկայական տնտեսության զարգացման քաղաքականության իրականացման բնագավառում, ինչպես նաև գիտական հետազոտությունների և ուսումնական նպատակների համար:

Ռոզա Յուրիի Ավագյանի «Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները եվ դրանց հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունն իր գիտական մակարդակով, հիմնավորվածությամբ, արդիականությամբ համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Գ. Ա. Վահանյան

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգորի Արշալույսի Վահանյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

21 հունիսի 2021թ.